

Վաճառքի գործընկերության ընտրությունը կատարվելու է հիմնվելով ընտրվող վաճառականի վրա դրված պահանջարկներին և իրենց հարկածներին համարձակ և համարձակագրված պայմանագրեր կնքելու համար պարզապես համարձակաբար կատարվող ընտրությունը:

Վաճառքի գործընկերության ընտրության արդյունքում ընտրվող վաճառականը պետք է կատարի իր ստանդարտներին համարձակագրված պայմանագրեր կնքելու համար պարզապես համարձակաբար կատարվող ընտրությունը: Վաճառքի գործընկերության ընտրության արդյունքում ընտրվող վաճառականը պետք է կատարի իր ստանդարտներին համարձակագրված պայմանագրեր կնքելու համար պարզապես համարձակաբար կատարվող ընտրությունը:

- Վաճառքի գործընկերության ընտրությունը կատարվելու է հիմնվելով ընտրվող վաճառականի վրա դրված պահանջարկներին և իրենց հարկածներին համարձակ և համարձակագրված պայմանագրեր կնքելու համար պարզապես համարձակաբար կատարվող ընտրությունը:

- Ընդհանրապես ես կգատի գրող գոյականը ժամանակակից ածականից, քանի որ այն բոլոր իմաստներով եւ արտահանատային բոլոր ոլորտներում անկախ է, իսկ երկրորդ եզրը ժամանակագրական ցուցիչով գոյաբանական ներքին տրոհումներ ունի. թեպետ, չգիտես ինչու, հասարակությունը ժամանակակից գրողներ համարում է նրանց, ովքեր ստեղծագործել սկսել են 1980 - 2000 - 2010ական թվականներին, բայց արդյոք ժամանակակից չե՞ն 20-րդ դարի 20 - 30 - ական, ապա՝ 60 - 70 - ական թվականներին գրական ընթացքում ընդգրկված ուժերը: Նրանցից շատերն այսօր էլ շարունակում են ստեղծագործել կամ արդյոք ժամանակակից չե՞ն Նարեկացին, Ֆրիկը, Քուչակը, Սայաթ-Նովան ...

Ինչ վերաբերվում է գրող ըմբռնմանը, ապա գրամոլն էլ է իրեն գրող համարում, եւ ամեն ինչ ժամանակի տիրոջում հստակվելու խնդիրն ունի: Եթե խոսենք անունների մասին, ոչ թե արտասահմանյան, այլ՝ հայ, ապա դիմառնում ենք գրող - ժամանակակից հասարակություն չկայացած հարաբերությանն ու կապին: Վերջերս կարծեմ հարցում էր կատարվել 60 – 70 – 80 - ական թվականներին ստեղծագործած եւ այսօր էլ ստեղծագործող գրողների առումով: Դպրոցականը, տարեցը, երիտասարդը, ուսանողը կամ որ նույնն է՝ պատահական անցորդը նշել էին Պարույր Սեւակին, Հրանտ Մաթեոսյանին, Ռազմիկ Դավոյանին, ապա՝ Վիլյամ Գրիգորյանին: Այս համատեքստում, եթե չհաշվենք անցյալի արտասահմանյան գրականությունը, ապա ժամանակակից արտասահմանցի գրող եւ ժամանակակից հայ գրող եզրերը նույնանում են, քանի որ հասարակությունը երկուսին էլ չի ճանաչում:

Երբեմն՝ ինչպե՞ս կհատկանշեք ժամանակակից գրականությունը հարցին ուսանողները պատասխանում են ինչ-որ դպրոցական անգիր արած կաղապար-թոթովանքների կամ անցյալ դարից մնացած շաբլոն իմացությունների միջոցով, որոնցում իսպառ բացակայում է սեփական դատողությունը: Երեւույթ, որ մի կողմից գետտո է հիշեցնում (ուսուցիչ - աշակերտ - հասարակություն) եռանկյան օրենքներով ու սահմաններով, մյուս կողմից Ոչինչն է, մշակութային արիթմիկան, որ վտանգ է ծնում, ու եռանկյանը մոտենալը դառնում է սարսափելի, քանզի հասկանում ես, որ դու՝ դու ես, բայց քո կողքին կա մի այլ

իրականություն, որ խորթ է այլեւս:

- ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕ - ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ
ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ
ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ
ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕ
ՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕ :

- Երբ ասում ենք գրող-մրցանակակիրներ, հավատում ենք ու խոստովանում, որ այնուամենայնիվ անհրաժեշտ են գրողի մոնումենտալ կերպարներ, որոնք, ի դեմս առանձին գրողների՝ Պերճ Ջեյթունցյան, Նորայր Ադալյան, Լեւոն Խեչոյան, Վիգեն Խեչումյան, Գուրգեն Խանջյան, Վարուժան Այվազյան, Ռուբեն Հովսեփյան եւ այլք, կան:

Սակայն այդ մոնումենտալությունը այլոց դեմքով երբեմն փոխակերպվում է կեղծ անձնապաշտության, որ հետո շրջվում է ընթերցողի դեմ որպես շատ-շատ տարօրինակ անաքրոնիզմ, իսկ այս դեպքում գուցե պետք չէ՞ խաբենք մեզ: Այդպես 2010 թվականի «Հայը 21-րդ դարասկզբին» մրցանակի դափնիներով շղարշված մի տիկին՝ արձակամիջանաղլական ժանրով գրողներից, ով տառապում է հայ գրականության սյուներից լինելու ցնդախտով, Երեւանի բոլոր անկյուններում պատմում է, թե ՀԳՄ - ում հանձար են անվանել իրեն, բայց ահա հեռուստատեսային համապատասխան հաղորդումների ժամանակ, չգիտես ինչու, լռում են այդ մասին: Ու տիկինն այդպես էլ չի կողմնորոշվել՝ հանձա՞ր է ինքը, թե՞... Այս դեպքում երկու՝ «հանձարի» ու «մոնումենտալության» գաղափարները դիմառնում են արդի գրական քաղաքականության արժեհամակարգի նիշերի նվազմանը: Այս պարագայում Չարենցը գուցե ցուցամատը մոտեցնե՞ր շուրթերին ու ասե՞ր՝ սը՛սսս...

Կան գրողներ էլ, որոնց թվում է, թե հեռուստաթերից որքան շատ աղբ թափեն մյուս գրողի հասցեին, իրենց «հանձարն» այնքան վերելք կապրի... Մյուսն էլ արձակի քննարկում է կազմակերպում: Հրավիրված գրականագետներից մասնակցում են երկուսը միայն, սակայն դա չի խանգարում նպատակասլաց տիկնոջը գրել նաեւ բացականների անունները ու՝ հղել հանրապետության տարբեր թերթերի: Սրանք հանգամանքներ են, որ մեզ մոտեցնում են մեր իսկ նկարագիր-խեղճությանը. մեկի անունը տրվեց, մյուսինը՝ ոչ, մեկին՝ շատ, մյուսին՝ ոչինչ, մեկին երկու ոտքով կանգնելու տեղ, մյուսը կարծես թե ոտքեր չունի, երրորդին՝ իշոտնուկ, չորրորդին՝ ոչինչ... Խեղճ ենք, խեղճ, որովհետեւ 21-րդ դարում բամբասանքը շրջանառվում է դեռեւս մեր արյան հետ ու ձեռք է բերել գրական պորնկության գենետիկ հատկանիշներ: Այդպես էլ գրում են, պատմվածքից մի թել քաշես՝ տասը կարկատան-բամբասանք կթափվի...

- ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕ, ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ - ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ
ՕՕՕՕՕՕ :

- Անձնական շահ - գրականության շահ եզրերն ընդհանրապես չպետք է համընկնեն. անընդունելի է, երբ գրողը խոսում է գրականությունից, սակայն ինչպես ասում են, ծին կապում իր ախորում եւ անվանարկում ընկերոջը՝ մոռանալով, որ կարյերիստության սեփական թատրոնում ինքն իրեն վստահել է Հուդայի դերը, ու հենց նոր 30 արժաթով վաճառեց մի լավ գրողի, եթե ոչ՝ ընկերոջը: Հասկանում ես, որ Աստծո գառան դիմակի ու նրա դիվային էության միջեւ նույն մարդն է՝ նսեն, ստոր ու ճղճիմ... Այդպիսի գրողը լավ գրականություն ստեղծել չի կարող:

- ՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ
ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ Օ
ՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ...

- Գրականության եւ, մասնավորապես, պոեզիայի ըմբռնումը որպես հրաշքի, որը ընթերցողի համար գրողական ճշմարիտ կեցվածքի կամ պատվախնդրության հարց էր, վաղուց սպառել է իրեն: Լավ գրողներն, իհարկե, շատ են, սակայն խնդիրն ընթերցողինն է, ով չի գիտակցում, որ տեղի է ունեցել երկու մշակույթների տարանջատում (1990 - ականներից առաջ եւ հետո)՝ վերջ դնելով իսկական մտավորականների ժամանակաշրջանին եւ սկզբնավորելով նոր, ինտելեկտուալ այլ ոլորտ, որը ձեւաքանդում է սոցռեալիստական քառսը, եւ հայտնվելով այլ քառսի տիրույթում, վերակազմավորում է այն տիեզերքի սահմաններում:

Սրան զուգահեռ սպառողական շուկայում ի հայտ է եկել, այսպես կոչված, մանիպուլյացիոն արտադրանք եւ ոչ թե գրականություն, որը գնալով վտանգավոր է դառնում եւ որում բացակայում է տվյալ հեղինակի գեղագիտական ըմբռնումների համակարգը: Այդպիսի ոտո-հեղինակներ են Կարինե Աղաբեկյանը (Երեւան), Ժաննա Հակոբյանը (ԼՂՀ) եւ ուրիշներ: Ժամանակակից մարդու (այստեղ՝ գրողի) զգայական-հոգեւոր այդպիսի մուտացիաներն էլ իրենց ուղղակի ազդեցությունը կարող են թողնել գրականության վրա, որը շատ վտանգավոր ու առավել խորքային երեւույթ է, քան կարծում ենք, ուստի այսօր խոսելով գրականության մասին, այնուամենայնիվ վախենում ենք, քանզի վտանգները նույնն են, ինչ խորհրդային ժամանակներում:

- ՕՕՕՕՕՕ ՕՕ, ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ **20-**ՕՕ ՕՕՕՕ **50-60-**ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ: ՕՕՕՕ ՕՕՕՕՕ **1990-**ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ:

-Ժամանակակցությունը (contemporary) իր մեջ պահպանում է դեռեւս մոդերնի գաղափարը, ինչպես որ վերջինս իր ներսում սաղմնային վիճակում մշտապես կրել է պոստմոդերնի գաղափարը, թեպետ երկուսն էլ ժամանակային առումով բավական տարբաժանված են, ինչպես անգլո-ամերիկյան այսօր (today) հասկացությունն էր 20-րդ դարի 2-րդ կեսին ստեղծվող արեւմտյան գրականության տիրույթում նոր իմաստ ձեռք բերում: Ահա այս համատեքստում ըմբռնելի են գրող-ժամանակակից եւ ժամանակակից-գրող եզրերը, որոնց կողքին շրջանառվում են նաեւ «արդի հայ գրականություն», «մեր օրերի գրականություն», «ժամանակակից գրականություն» արտահայտությունները, թեպետ դրանք գործառվող միջեր են միայն, քանի որ կան ուղղակի գրող ու պոեզիա ըմբռնումները, որոնք սնվում են ավանդույթից եւ նորոգվում անընդհատ, ինչպես ամեն կենդանի օրգանիզմ:

Այս ամենին զուգահեռ գոյություն ունեն նաեւ գրականության, այսպես կոչված, սահմանային տարածքներն ապահովող գրողներ, ովքեր իրենց գրողական գոյությունն ապահովում են ոչ թե ստեղծածի ծանրության ու լրջության հաշվին, այլ ժամանակի պտույտում առկա բաց տարածության. խոսքս այսօրվա միջին սերնդի մասին է, թե՛ արծակի, եւ՛ թե պոեզիայի ժանրերում: Արեւմտյան գրականագիտությունը սույն երեւույթին marginal անունն է տվել: Սա փաստ է, որը կապված է 1988-2000 թվականներին տիրող քառսային իրավիճակի զարգացումների հետ, երբ գրողի հերոսական կերպի ոչնչացմանը զուգահեռ ի հայտ եկավ նրա նոր կերպը՝ հիացմունքի, խոնարհումի ու ծափահարությունների պահանջներով. օպերայի հրապարակում տեղի ունեցող հանրահավաքների հոգեբանությունը փորձեցին տեղափոխել գրականություն: Թեպետ այս պրոցեսն այսօր առկա է բոլոր բնագավառներում,

Եւ իրականանում է հիմնականում մարդու հոգեւոր տիրոջութիւն կատարվող տեղեկատվական ու հոգեբանական պայթյունների արդյունքում, որոնք էլ դառնում են ձեւաքանդող տարբեր իրողութիւնների պատճառ:

- ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ, ՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ:

- Միանշանակ ոչ, որովհետեւ այսպիսի տեսակետների ու հայացքների (ավարտ, ճգնաժամ կանխագուշակող) մարդկութիւնն առնչվել է բոլոր ժամանակներում, ավելի վատ դեպքեր էլ են եղել, ու հասարակութանը միշտ էլ թվացել է, թե գրականութիւնը ճգնաժամի մեջ է: Սակայն սա նորմալ վիճակ է հատկապէս պոետիկ համար, այն միշտ է ճգնաժամի մեջ, որովհետեւ պետք է անցնի հոգու տիրոջութիւն, որի ճանապարհին փոխվում է ամեն ինչ. նրա ընկալումը, ըմբռնման սկզբունքները, տեղեկատվական տիրոջութիւն, նշանները, գաղտնագրերը եւ ամենեւին էլ պետք էլ ասել, թե ոչինչ չի իրականանում եւ ճգնաժամ է: Հրաշալի հայ պոետիկ ունենք այսօր` Հենրիկ Էդոյան, Արեւշատ Ավագյան, Հովհաննէս Գրիգորյան, Հրաչյա Թամրազյան, Հակոբ Մովսէս, Ավագ Եփրեմյան: Նրանք բոլորն էլ տարբեր են իրենց գեղագիտական հղումներով, սակայն միասնականութան մեջ դիտելիս բավական հետաքրքիր պատկեր է ստեղծվում: Այլ հարց է` ճանաչում են նրանց, թե չեն ճանաչում, որն առավելապէս տեղեկատվական ոլորտի հետ է առնչվում:

- ՕՕՕ **1990-**ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ: ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ:

- Դուք իրավացի եք, այստեղ եւս նկատվում է տրոհում` 1990-ականներից առաջ եւ հետո, եւ դա միայն թարգմանական գրականութան բնագավառում չէ: Այդ խնդիրը նկատվում է նաեւ արդի հայ գրականութան զարգացման միտումներում, որը բացատրելի է ոչ միայն 90-ականներին ունեցած քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային խնդիրների, այլեւ հոգեբանական գործոնի քայքայման արդյունքում տեղի ունեցած ամայության ու աղճատման տեսանկյուններից:

Վերջին տասնամյակում (2000-2012) նկատվում է առաջընթաց համաշխարհային ճանաչում ու մեծ հեղինակութիւն ունեցող առանձին հեղինակների բնագրային թարգմանութիւնների առումով, ինչպէս` Զեյնա Զոյսի «Ուլիսեսը» (որն ուղղակի աննախադեպ նվեր էր մեր հասարակութանը) Սամվել Մկրտչյանի, Պաստեռնակի բանաստեղծութիւնները` Հրաչյա Թամրազյանի, Հյուլդերիկի, Գեորգ Թրակլի բանաստեղծութիւնները` Հակոբ Մովսէսի, Դոստոեւսկու երկերը` Արմեն Հովհաննիսյանի, Բրոդսկու ստեղծագործութիւնները Ավագ Եփրեմյանի, հին եգիպտական պոետիկ ընտրանին Հենրիկ Էդոյանի կամ անգլո-ամերիկյան պոետիկ երկու ընտրանիները` Սամվել Մկրտչյանի եւ Արտեմ Հարութիւնյանի թարգմանութիւններով եւ այլ գործեր: Ինչ մնում է ժամանակակից արտասահմանյան կամ ռուս գրականութան հետ ծանոթութանը, ապա անվիճելի է, որ շփումը նրա հետ ընդհանրապէս չի կայացել, քանզի բոլորովին նոր` 21-րդ դարի արտասահմանյան կամ ռուս գեղարվեստական գրականութիւնն առայժմ տեսանելի չէ:

Շատ ընթերցասերներ էլ ժամանակակից ռուս կամ արտասահմանյան գրականութիւնը բացահայտում են այլ հեղինակների միջոցով` Խուլիո Կորտասար, Գարսիա Մարկես, Լուիս

Բորիսեն, Մանդելշտամ: Անհնար է այս համատեքստում չհիշատակել «Սարգիս Խաչենց» - «Փրինթ Ինֆո» հրատարակչությունների գործակցությամբ լույս տեսած համաշխարհային արվեստի եւ փիլիսոփայության մատենաշարը (Պոլ Վալերի, Օգյուստ Ռոդեն, Էժեն Դելակրուա, Վան Գոգ, Սեզան, Գոգեն, Խուան Միրո, Կանդինսկի, Հայդինգա, Պլատոն, Կանտ, Ֆերդինանտ դե Սոսյուր, Դեգա, եւ այլք) Սերգեյ Ստեփանյանի, Էդվարդ Աթայանի, Արուս Բոյաջյանի, Արա Խաչիկոզյանի, Հենրիկ Բախչինյանի, Ամալյա Մուրադյանի, Սամվել Ղռաթյանի եւ այլոց՝ տեքստի զգացողության անօրինակ թարգմանություններով: Անչափ կարեւորում են նաեւ Սամվել Մկրտչյանի խմբագրությամբ լույս տեսնող «Արտասահմանյան գրականություն» ամսագիրը, որի դերն ու նշանակությունը անուրանալի է մեր մեր օրերում: Սույն անունները նշելիս, սակայն, նկատի ունենալով առանձին անհատների կամ հրատարակչությունների, որոնցից շատերն իրենց միջոցներով կամ հովանավորչությամբ են լուծում տպագրության խնդիրները, այլ կերպ՝ չկա պետական մոտեցում այս խնդրին, քանզի լայն առումով չունենք թարգմանական դպրոց: Գիտենք, որ բուհերում ինձ հետ չեն համաձայնի, քանի որ կան համապատասխան ֆակուլտետներ, եւ անցնում են համապատասխան առարկաներ, ուրեմն ինչո՞ւ տվյալ ֆակուլտետն ավարտող մասնագետը պետք է ստիպված լինի պատվերներ հայթայթել եւ ոչ թե ստանալ, եւ ուրեմն ինչո՞ւ պատվիրատուն պետությունը չէ՝ ի դեմս Մշակույթի նախարարության, ինչո՞ւ չկա պետական հոգածություն, ինչո՞ւ չկան աշխատատեղեր՝ համապատասխան աշխատավարձով, հարցերը մնում են առկախ: Ահա այս լաբիրինթոսում կորչում է մի շատ կարեւոր երեւոյթ՝ պրոֆեսիոնալությունը:

- 0000000 000 00 0000000 00000000՝ 00000000000 00000 - 0000000000 - 000000000 0000 00000 :

- Եթե որեւէ մեկը մտածում է, թե թարգմանությունն անհատական խնդիր է, չափազանց սխալվում է, քանզի յուրաքանչյուր թարգմանիչ, կարծում են, պատասխանատու է թե՛ իր փոխարեն, թե՛ ընթերցողի, եւ թե՛ այն հեղինակի, ում թարգմանում է: Անժխտելի է նաեւ, որ յուրաքանչյուր տեքստում թարգմանիչը ներդնում է սեփական հոգու մասնաբաժինը, ինչո՞ւ չէ՝ ժամանակը, թեպետ այդ «կորուստն» անպայման փոխլրացվում է տիեզերական-հոգեւոր այն ֆենոմենով, որ նա գտնում է լավ հեղինակի գործերը թարգմանելիս: Այս կերպ նաեւ նա նույնանում է թարգմանվող հեղինակին, մտածում նրա նման, ուսումնասիրում մշակույթը, որի ծնունդն է տվյալ հեղինակը, անցնում լաբիրինթոսներով, որով գնացել է տվյալ գրողը՝ երկի մտահղացումից իրականացում ճանապարհին, որքան էլ չհամընկնեն նրանց՝ տարածության ու ժամանակի ընկալումները: Ի վերջո, ձեւավորվում է մի մեծ լաբորատորիա, որտեղ ամեն ինչ կա՝ նոր մշակույթ, նոր բառապաշար, նոր հոգեվիճակ... Այս երեւոյթն անշուշտ խթանում է նաեւ տեղական գրականության զարգացումը, իհարկե՝ տարբեր ազդեցություններով, նույնիսկ՝ վատ:

- 000 0000000 00000000 000 00 000 00000000 00000000000000000000 000000 00 00000, 000 0000 000000 0 0000000000, 0000 000000000 000 000000000000000000, 000 00 000000 00, 00 00000000000 0000000000000000 00000000000 0 0000000000, 000000 000000 :

- Խորհրդային տարիներին օտար լեզվի թվացյալ լավ իմացության պայմաններում նույնիսկ Հայաստանում թարգմանվում էր այն, ինչ թույլատրում էր գրաքննությունը: Ինչո՞ւ են ասում թվացյալ, որովհետեւ շատ հեղինակներ թարգմանությունը կատարում էին ռուսերենից, բայց տիտղոսաթերթին գրում էին՝ թարգմանությունը՝ բնագրից, ասենք օրինակ՝ իսպաներենից:

Այսօր օտար լեզու սովորելու նորից թվացյալ աշխուժության մեջ թարգմանության մեծ խնդիրներ ունենք, իսկ ռուսերենն ընդհանրապես այնքան է օտարացել, որ այս տարի ի վերջո ընդգրկվել է բուհական ընդունելության օտար լեզուների ցանկում, քանզի շատերը նույնիսկ ռուսերեն տարրական - առօրյա հաղորդակցության չեն տիրապետում, էլ ուր մնաց՝ թարգմանություն կատարեն:

Բնագրային վատ թարգմանություններ, այո, կան, որովհետեւ ընթերցելով երկը, հասկանում ես, որ թարգմանիչը հայոց լեզվի իմացության խնդիր ունի կամ թարգմանվող լեզուն գուցե ավելի լավ գիտի, քան՝ հայերենը, որի արդյունքում ստացվել է ինչ-որ կծկված-աղձտված թարգմանական տեքստ, որը լի է կետադրական եւ ուղղագրական, շարադասական, իմաստային ու ոճաբանական սխալներով, այլ կերպ՝ հայոց լեզվի գրոյական գրագիտությամբ: Երբեմն հանդիպում ես նաեւ սիրողական մակարդակի. թարգմանված տեքստում բացակայում են ծանոթագրությունները կամ հղումները, երբեմն օժանդակ բայերը կամ տեքստը այնքան են հեռանում բնագրից, որ երբ ընթերցում ես նույնի՝ օրինակ անզլերեն տարբերակը, միայն ինչ-որ աղոտ աղերսներ ես գտնում երկու տեքստերի միջեւ: Ես էլ ձեզ եմ հարց ուղղում՝ ինչպե՞ս հղվվի լեզուն կամ հարստանա բառապաշարը, երբ հույսը ընթերցողն է:

- ՕՕՕ ՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ. ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ : ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ :

- Խորհրդային շրջանում կային պատվերներ եւ պրոֆեսիոնալ թարգմանիչներն ավելի շատ էին, քան այսօր, սակայն այն ժամանակ էլ ամեն ինչ ենթարկվում էր գրաքննության ճնշմանը. լավագույն երկերից հանվում էին լավագույն կտորները, իսկ շատ ու շատ լավ գրողների բացահայտում ենք միայն այսօր, այն էլ՝ շնորհիվ ռուս թարգմանիչների: Օրինակ՝ մինչ օրս ծանոթ ենք Աստրիդ Լինդգրենի «Կարլսոնը, որն ապրում է տանիքում» մանկապատանեկան գրքին՝ ըստ հրամցվածի, սակայն պարզվում է, որ ընթերցել ենք միայն այն տարբերակը, որը թույլ են տվել՝ մաքրած-փայլեցրած: Իսկական երկը, որ տպագրվեց 2007-ին ռուս թարգմանչի շնորհիվ, ամենեւին էլ նման չէ մեր ընթերցածին:

Գրաքննության բացակայությունը՝ չաղձատված երկ ընթերցելու պայմանով, եթե ճիշտ օգտագործվի՝ ճաշակով գրականություն թարգմանելու համար, իհարկե, կշահենք: Եվ եթե լինեն հրատարակիչներ Քճաշակով իհարկե), ովքեր կգբաղվեն թարգմանության հարցերով՝ ռուս եւ արտասահմանյան գրականությունների պատվիրման, տպագրության, իրացման, ինչպես նաեւ՝ տեղականի արտահանման, ապա դա կդառնա այն տարբերակներից մեկը, որի միջոցով հասարակությունը կարող է լինել տեղեկացված ու կիրթ, եւ այդ դեպքում տեղացի գրամուլը, գուցե, դժվարանա մոլորեցնել սովորական ընթերցողին:

Սակայն հրատարակիչները տպագրում են միայն այն, ինչ ներկայացնում է թարգմանիչը, այն էլ՝ երբ համընկնում են նրանց ճաշակները: Սա մի կողմից լավ է, իսկ մյուս կողմից՝ ամեն թարգմանիչ կամ հրատարակիչ չէ, որ ճաշակով է: Ու քանի դեռ չկան էական պատվերներ, չեն լինի նաեւ թարգմանիչ - պրոֆեսիոնալներ:

Այս երեւույթն է պատճառը, որ թարգմանական քառս է տիրում նաեւ մասնագիտական գրականության բոլոր բնագավառներում՝ գրականագիտության, տնտեսագիտության, բժշկության, լրագրության, փիլիսոփայության եւ այդպես շարունակ... Թյուր կարծիք թող չստեղծվի, թե գրականագետը կամ գրողը չի հետաքրքրվում փիլիսոփայությամբ, բժշկությամբ, հոգեբանությամբ, աստղագիտությամբ կամ այլ ոլորտներով:

-ՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ -ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕ, ՕՕ ՕՕՕՕ

ՊՐԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ :

- Ինձ համար գատորոշելի են ոչ միայն պրոֆեսիոնալ թարգմանիչ, այլև գրող-թարգմանիչ եւ պոետ-թարգմանիչ եզրերը, քանզի բանաստեղծը սովորական թարգմանիչ չէ (ու վերը նշած բոլոր հեղինակներն էլ բանաստեղծներ են), քանզի պոետական թարգմանություն կոչված թվացյալ պարզ երեսույթի ներքո թաքնված է բանաստեղծի երեւակայության թռիչքն ու բանաստեղծական գյուտը, որը տարածության ու ժամանակի մի որոշակի հատվածում փոխակերպվում է անզերագանցելի հաղորդակցական միջոցի` ընթերցողին նույնպես փոխադրելով այդ նույն աշխարհը: Բառերս կարող են սովորական թվալ, քանի որ միայն պոետին են հասու բանաստեղծության թարգմանության գաղտնիքները, քանի որ նրա ու թարգմանված տողի միջոցով է հնարավոր միայն պահպանել ու ընթերցողին հաղորդել տվյալ մշակույթի էներգիայի տիրույթը:

Մյուս կարեւոր առանձնահատկությունը թարգմանական հոտառությունն է, որ պոետի մոտ այլ է, սովորական թարգմանչի մոտ` այլ. ազատության այլազան որակները նկատի ունեն: Եթե այս մոտեցումները կարողանում է պահպանել թարգմանիչը, կրկնում եմ` պոետ-թարգմանիչը եւ խոսքս բանաստեղծության գեղարվեստական թարգմանության մասին է, ուրեմն թարգմանված քերթվածը ծառայում է նպատակին, եւ ընթերցողին հասու է դառնում տվյալ մշակույթը կրող հեղինակը:

Կատարածս աշխատանքների մասին չեմ սիրում խոսել, թեպետ համաշխարհային գրականության կարեւորագույն նմուշներից են, ուղղակի կնշեմ հեղինակներին, որոնց ստեղծագործությունները թարգմանել եմ` Խուլիո Կորտասար «Խոսեք, դուք ունեք երեք բառ», Ե., 2009: Ալֆոնսինա Սթորնի «Թռիչք մեռած հողում», Ե., 2010: Խորխե Կարերա Անդրադե «Լուրեր ծովից ու ցամաքից», Ե., 2011 եւ կհավելեմ, որ երեքն էլ բանաստեղծությունների ժողովածուներ են, երեքն էլ տպագրել է «Լուսակն» հրատարակչությունը:

-ՊՐԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ :

- Առայժմ կարելի է ձեւակերպել այսպես` սրանք նոր գոյակերպեր են` նոր մոտեցմամբ ու նոր հայացքներով տարաշխարհիկ իրականություններ, որոնք թեւ զարգացման փուլերում են, բայց դեռեւս կարգավորված չեն եւ նոր վերաբերմունք են պահանջում տարբեր բեւեռներից` ուղղակիորեն առնչվելով մարդ ֆենոմենին, որն առավելապես հարաբերվում է մետապատմական ըմբռումներին, հետեւաբար եւ այս մասին երկխոսությունն առայժմ պետք է հետաձգել:

ՊՐԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍՏԵԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ